«Նոր ժամանակի կրթություն»ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Բարոյական արժեքներ*

Առարկան՝ *Մաթեմատիկա*

Հետազոտող ուսուցիչ՝ *Հասմիկ Մկրտչյան*

Ուսումնական հաստատություն՝ *ՀՊՄՀ–ի հենակետային վարժարան*

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2. Ի՞ՆՉ Է ԱՐԺԵՔԸ

3. ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

4.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

5.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արժեքները մարդու ներաշխարհի կարևորագույն բաղադրիչներ են . արժեքներից են մեծապես կախված մարդու նախասիրությունները, համոզմունքները, դիրքորոշումները, նպատակադրումները, պահանջմունքները, սոցիալական ուղղվածությունը, վարքը …

Ընտանիքը, եկեղեցին, շրջապատը և հանրակրթական դպրոցը արժեքների ձևավորման հիմնական օղակներն են: Վերջինս վճռական նշանակություն ունի սովորողների արժեքային կողմնորոշումների և արժեհամակարգերի ընդհանրության, դրանցում ազգային և համամարդկային արժեքների ներառման , բարոյական և գեղագիտական դաստիարակության ընդհանրական խնդիրների լուծման , ճանաչողական արժեքների միասնական համակարգի ձևավորման տեսանկյունից: Այդ պատճառով արժեքների ձևավորումը հանրակրթության հիմնական խնդիրներից է:

Հանրակրթական դպրոցում արժեքների ձևավորումը հիմնականում իրականացվում է ուսուցման, յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման գործընթացում: Որպես ուսումնական առարկա մաթեմատիկան ունի արժեքների ձևավորման մեծ ներուժ:

Առանցքային է համարվում սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի և ներդաշնակ զարգացումը,նրանց պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորումը: ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում սովորողների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է որպես կրթության բովանդակային բաղադրիչ: Այս փոփոխությունների ժամանակաշրջանում,երբ ժամանակակից աշխարհը լեփ-լեցուն է բազմաթիվ դրական և բացասական դրսևորումներով, երբ շարունակում են ավելանալ մանկատներն ու ծերանոցները,երբ փողոցում հանդիպում ենք մուրացկան և անօթևան երեխաների,յուրաքանչյուրիս համար հրամայական խնդիր է դարձել անհատի մեջ արժեքային համակարգի,հանդուրժողականության և վարվելակերպի որոշ հատկանիշներ ձևավորելը: Աշխարհաքաղաքական այս վայրիվերումների ճանապարհին կարևոր դեր ունի ուսուցիչը՝ արժեհամակարգ ձևավորելու և հումանիստ,հայրենասեր,ընտանիքը կարևորող սերունդ դաստիարակելու գործում:

Երեխաները դպրոց են գալիս տարբեր ընտանիքներից և նրանց համար ընդունված արժեհամակարգային չափանիշը պայմանավորված է իրենց միջավայրով: Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: ՈՒսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի (խաղ, էքսկուրսիա, դասղեկական ժամ,արտադասարանական միջոցառում, հարց ու պատասխան) ընտրության միջոցով առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը: Հանրակրթության գլխավոր նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է:

Հետազոտության նպատակը: Ցույց տալ, որ աշակերտների բարոյական արժեքների ձևավորմանը կարելի է հասնել նաև մաթեմատիկայի դասաժամերին:

Հետազոտության խնդիր: Իրականացված հետազոտության շրջանակներում հիմնավորել արժեհամակարգի, մասնավորապես բարոյական արժեքների ձևավորման կարևորությունը:

Ի՞ՆՉ Է ԱՐԺԵՔԸ

Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա։

Արժեքը ինչ-որ բանի օգտակարությունն է, կարևորությունը, նշանակալից լինելը։ Այն օբյեկտի այնպիսի հատկությունն է , որը բավարարում է սուբյեկտի պահանջմունքներն ու ցանկությունները։ Սակայն օբյեկտի՝ առարկայի , երևույթի առանձին հատկությունը արժեք է դառնում միայն այն դեպքում, երբ կա սուբյեկտը՝ մարդը, որը ճանաչում է այդ հատկությունը, գնահատում և արժևորում է այն։ Այսինքն առարկայի , երևույթի նկատմամբ մարդու վերաբերմունքով, դրան տված նրա գնահատականով է որոշվում այդ առարկայի կամ երևույթի արժեքը։

Առարկայի կամ երևույթի արժեքը պայմանավորված է նաև մյուսների ՝ դրան տված գնահատականով։

Արժեքները հարաբերական են այն իմաստով, որ դրանք պայմանավորված են յուրաքանչյուր մարդու ճաշակով, նրա զգայական աշխարհով, ճանաչողությամբ , բնավորությամբ, ինտելեկտով և սուբյեկտիվ այլ հատկանիշներով։ «Յուրաքանչյուր գրողի գլխավոր գլուխգործոցը նրա ընթերցողն է», -ասում է Վ. Նաբոկովը՝ նկատի ունենալով , որ ընթերցողի ՝ վերը թվարկած հատկանիշներից է կախված ստեղծագործությանը տված նրա գնահատականը։

Արժեքները հատուկ են հասարակությանը։ Նրա անդամների համար բարձրագույն արժեք պետք է հանդիսանան այդ հասարակության գոյատևումը, դրան ուղղված նորմերը, որոնք պետք է պարտադիր լինեն բոլորի համար, անգամ եթե դրանք հակասական են կամ անարդար։

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրապետության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ։ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը։ «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով։ Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական,

մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային 4 գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը:

Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է» : Սովորողի անձի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը

միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն): Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն: Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա:

ԱՐԺԵՔՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ

Արժեքները բազմաթիվ են ու բազմազան։ Դրանցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, միայն իրեն բնորոշ հատկանիշները, որոնցով այն տարբերվում է մյուս արժեքներից։ Միաժամանակ բազմաթիվ լինելով հանդերձ , արժեքները իրար հետ գտնվում են որոշակի փոխհարաբերությունների մեջ և բաժանվում են ըստ դասերի կամ տեսակների։

Առանձնավնում են դրական և բացասական արժեքները՝ նկատի ունենալով դրանց սոցիալական նշանակությունը և իրացման հետևանքները։ Գեղեցիկը, ճշմարիտը, բարին դրական արժեքներ են, տգեղը , կեղծիքը, չարը՝ բացասական արժեքներ։

Մարդու համար առաջնահերթ նշանակություն ունեն կենսական արժեքները, որոնք ուղղված են մարդու կենսական պահանջմունքների բավարարմանը։

Կարևոր հոգևոր արժեքներ են բարոյական արժեքները։ Դրանք կոչված են կարգավորելու մարդու վարքը, որոշելու մարդկային փոխհարաբերությունների բնույթը։ Բարոյական կարևորագույն արժեքներ են բարին ու չարը, սերը և ատելությունը, հարգանքը, արդարությունը, պարտքը, խիղճը, ամոթը, առաքինությունը, պատիվը, ազատությունը, կյանքի իմաստը, երջանկությունը…

Այս արժեքները կազմում են նաև զանազան իմաստասիրական և կրոնական ուսմունքների անքակտելի մասը, եղել են մարդկության մեծ ուսուցիչների , անցյալի և ներկայի բարոյախոսների ուսումնասիրության հիմնական առարկաները։

Բարին առ Աստված տանող ճանապարհ է, չարը մարդուն հեռացնում է Աստծուց։ Բարին դրսևորվում է մարդկանց օտարությունը , մեկուսացումը, հաղթահարելու և նրանց միջև փոխադարձ հասկացողության , համաձայնության , մարդկայնության որակներ հաստատելու միջոցով ։

Սերը մարդկային կյանքը , համակեցությունը կարգավորող, իմաստավորող հիմնական արժեքներից մեկն է ։

Մարդկային արժանապատվությունը պահանջում է յուրաքանչյուր մարդու մեջ տեսնել ու հարգել մարդուն։ Թվում է , թե բարոյական այս պարզ մոտեցումը պահպանելու համար առանձնահատուկ ջանքեր չեն պահանջվում։ Սակայն մեր իրականության մեջ հաճախ են դրսևորվում ուրիշին ծաղրելու, մարդկանց առանձին թերությունները ի ցույց դնելու և այլ միջոցներով նրանց մարդկային

արժանապատվությունը ոտնահարելու դեպքեր։ Այս և մարդկային էությունը նսեմացնող այլ վերքեր մարդու մոտ ձևավորում են շատ ուշ սպիացող բարոյահոգեբանական մի արատ, որի անունն է թերարժեքության բարդույթ։

Արդարությունը մարդկանց, մարդկային խմբերի միջև արժեքների բաշխումը կարգավորող հիմնական սկզբունքներից մեկն է։ Արդար է այն մարդը, ով բարի է, կատարում է օրենքները և բարուն պատասխանում է բարությամբ։ Անարդար մարդը չի հիշում իրեն արված բարությունը, խախտում է օրենքն ու այլոց իրավունքը։ Արիստոտելը գտնում է , որ արդարությունը առաքինություններից մեծագույնն է , այն ուղղություն է տալիս մնացած առաքինություններից։

Յուրաքանչյուր մարդ , իր բարոյական վարքը դրսևորելիս ելնում է բարոյական այն արժեքներից , որոնք նա կրում է։ Դա պայմանավորված է նրանով , որ մարդը բարոյական արժեքները ընկալում է որպես պարտք , որպես պրակտիկ իրականացման ենթակա գործողություն։ Հետևապես պարտքի գիտակցումով և իրագործումով է պայմանավորված մարդու բարոյական վարքը ընդհանրապես, ինչը ընդգծում է բարոյական այս արժեքի կարևորությունը։

Խիղճը և ամոթը մարդու բարոյական վարքի հիմնական ներքին կարգավորիչներն են։ Դրանցով է պայմանավորված հասարակության բարոյական նկարագիրը։ Սերվանտեսը ասում է՝ «Ապրիր քո խղճի հետ համերաշխ, և թող մարդիկ խոսեն , ինչ մտքներով կանցնի»։ Այսօր մենք ոչ միայն չենք հետևում մեծ իսպանացու պատգամին և համերաշխ չենք մեր խղճի հետ, այլև չենք էլ մտածում խղճի և ամոթի մասին ։

Պատիվը բարոյական այն արժեքն է , որը հասարակության կողմից դիտվում է որպես մարդու արժանիք, արժանիքի չափ։

Ազատությունը մարդու անօտարելի իրավունքն է՝ վարվել իր կամքին համապատասխան ։ Ազատությունը սեփական գիտակցության կատարած կամ գիտակցված ընտրությունն է և այդ ընտրության համար պատասխանատվությունը իր վրա վերցնելու վճռականությունը։ Ազատությունը սերտորեն կապված է անկախության , պատասխանատվության և բարոյական այլ արժեքների հետ, ինչը ավելի է կարևորում նրա ձևավորման անհրաժեշտությունը։

Կյանքի իմաստը բարոյական բարձրագույն արժեքներից մեկն է: Միևնույն ժամանակ այն ձևավորվում է մարդու ողջ կյանքի ընթացքում և հաճախ նրա կողմից չի էլ գիտակցվում: Կյանքի իմաստը սերտորեն կապված է կյանքի նպատակի հետ:

Երջանկությունը բարոյական բարձրագույն արժեք է , որին ձգտում է յուրաքանչյուր մարդ: Մարդու երջանկությունը կախված է բախտից ունեցվածքից, հասարակական դիրքից և այլ հանգամանքներից: Սակայն իրավացի է պոետը, երբ գտնում է, որ յուրաքանչյուր մարդ իր երջանկության դարբինն է:

Բարոյական արժեքների ձևավորումը դաստիարակության հիմնական խնդիրներից է, եթե ոչ հիմնականը: Անշուշտ, սովորողների բարոյական արժեքների ձևավորման գործում անհամեմատ ավելի մեծ են գրականության և պատմության , կամ հումանիտար ցիկլի մյուս ուսումնական առարկաների հնարավորությունները, որովհետև հերոսության, հայրենասիրության, սիրո և բարոյական այլ որակների ձևավորման համար գրականությունը կամ պատմությունը կարող են դիմել գրական կամ պատմական ստեղծագործությունների, որոնցում առկա են նշված որակները կրող բազմաթիվ հրաշալի կերպարներ կամ պատմական դեմքեր: Մինչդեռ մաթեմատիկայի ուսումնական նյութը նման՝ կերպարային մոտեցման հնարավորություն չի ընձեռում: Բայցևայնպես, մաթեմատիկան նույնպես ունի բարոյական արժեքների ձևավորման հսկայական ներուժ, ինչը կարող է դրսևորել և դրական, և բացասական ձևերով:

Մաթեմատիկայի վերացական բնույթը , տրամաբանական խստությունը, նյութերի շարադրանքի հստակությունը, պարզությունը, հետևողականությունը, կիրառական լայն հնարավորությունները, ուսումնական այլ առարկաների հետ միջառարկայական կապերի բազմազանությունը ստեղծում են հանրակրթության համապատասխան բնագավառի ուսումնական առարկաների դասավանդման մի շարք առանձնահատկություններ, որոնք կարող են նպաստել ինչպես սովորողների դրական, այնպես էլ բացասական բարոյական արժեքների ձևավորմանը:

Թեև մաթեմատիկայի առարկայական չափորոշիչներում նշվում են նաև ուսուցման զուտ կրթական մի շարք նպատակներ, սակայն ինչպես հանրության , այնպես էլ մասնագիտական լայն շրջանակներում և կրթության կառավարման օղակներում իշխում է այն կարծիքը, թե մաթեմատիկայի դասը կոչված է սովորեցնելու

մաթեմատիկա։ Եվ, որովհետև ուսուցիչը գործ ունի աշակերտական ոչ համասեռ դասարանի հետ, ուրեմն նրա ուշադրությունն էլ բաշխվում է տարբեր կերպ։Աշակերտների մի մասը, որն աչքի է ընկնում մաթեմատիկական ընդունակություններով, գտնվում են ուսուցչի մշտական ուշադրության կենտրոնում, իսկ մյուս ավելի մեծ զանգվածը եթե հայտնվում էլ է ուսուցչի տեսադաշտում , ապա դիտողության արժանանալու համար։ Եվ նման դասարանը շերտավորվում է նախանձի ու թերարժեքության բարդույթի , արհամարհանքի ու մեծամտության , սիրո , համակրանքի ու ատելության , արդարության ու անարդարության , բարոյական դրական ու բացասական այլ որակների ամենօրյա և հետևողական դրսևորման մթնոլորտում։ Անկասկած, դժվար է խոսել նման մթնոլորտում բարոյական դաստիարակության , դրական բարոյական արժեքների ձևավորման մասին։

Մինչդեռ մաթեմատիկական կրթությունը, ինչպես և կրթությունն ընդհանրապես, նախատեսվում և ֆինանսավորվում է բոլոր աշակերտների համար։ Եվ իրավական պարտավորությունների կողքին, պատասխանատվության, արդարության , պարտքի, հարգանքի և բարոյական այլ մոտեցումներ ուսուցչից պահանջում են համանման կամ նույնանման վերաբերմունք բոլոր աշակերտների նկատմամբ։ Այդ դեպքում դասարանում կարող է իշխել հանդուրժողականության , փոխօգնության , հարգանքի, սիրո և բարոյական դրական այլ որակների վրա հենված մթնոլորտ, որում կձևավորվեն նաև դրական բարոյական արժեքներ։ Նման պայմաններում մաթեմատիկական կրթությունն իսկապես դառնում է բարիք, և մեծանում են հնարավորությունները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ձևավորելու բարու, սիրո, արժանապատվության, հարգանքի, պատվի, պարտքի, արդարամտության , ազատության , երջանկության, կյանքի նպատակի և իմաստի բարոյական հիմնարար արժեքները։

Հոգևոր արժեքների հաջորդ խումբը կազմում են <u>գեղագիտական</u> արժեքները։ Զգտումը դեպի գեղեցիկը, գեղագիտականի պահանջմունքը մարդու մեջ դրված է ի սկզբանե։ Ժամանակակից մարդու կյանքը նույնպես անբաժան է գեղեցիկից։ Մարդն իր ընտրությունը կատարելիս առաջնորդվում է նաև գեղեցիկով։

Գեղագիտական արժեքներ են նաև վեհը, սարսափելին, ստորը, ողբերգականը, կատակերգականը։ Գեղագիտական արժեքները ընկած են արվեստի , նրա բոլոր տեսակների հիմքում։

Ճանաչումը , ճանաչողությունը մեծ դեր ունի մարդու կյանքում. այն մարդու գոյությունը ապահովող հիմնական միջոցներից է։ Այդ պատճառով արժեքները, որոնք ուղղված են ճանաչողության իրականացմանը կամ ճշմարտային արժեքները կարևորագույն տեղ են զբաղեցնում մադու արժեքների շարքում։ Կարևոր ճանաչողական արժեք է գիտելիքը։ Ֆ. Բեկոնն ասում է՝ «գիտելիքը ուժ է»։

Ընդունված է համամարդկային անվանել այն արժեքները, որոնք ընդունվում են բոլորի՝ ողջ մարդկության կողմից։

Ազգային արժեքները առանձնահատուկ տեղ են գրավում մշակույթի ընդհանուր համակարգում։ Յուրաքանչյուր ազգ առանձնանում է միայն իրեն հատուկ խառնվածքով, մտածողության տեսակով և աշխարհընկալմամբ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքում ներկայացված է, թե ինչպես մաթեմատիկայի ուսուցման գործընթացում կարելի է ձևավորել աշակերտների արժեհամակարգը: Մաթեմատիկայի ուսուցման գործընթացը ունի մարդկային սիրո' բարեգործության, երախտագիտության և կարեկցանքի դրսևորման հսկայական հնարավորություններ ինչպես ուսուցիչ-աշակերտ, այնպես էլ աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում: ՈՒսուցչի՝ աշակերտին ցույց տված օգնությունը բխում է նրա պարտավորություններից և սիրո դրսևորում չէ: Հետևապես' այն չի կարելի դիտել որպես բարեգործություն: Սակայն ուսուցման գործընթացը, մանավանդ երբ խոսքը վերաբերում է մաթեմատիկային, հղի է անասելի դժվարություններով, և առանց աշակերտի նկատմամբ ունեցած սիրո, անհնար է մինչև վերջ հաղթահարել դրանք: Այսինքն, բացի իր ունեցած պարտավորություններից, որոնք կարելի է իրականացնել դասավանդման գործընթացի առանձին բաղադրամասերով, ուսուցիչը կարող է իրականացնել նաև լրացուցիչ ջանքեր, որոնք չեն մտնում իր ուղղակի պարտավորությունների մեջ և աշակերտի նկատմամբ սիրո դրսևորումներ են: Մաթեմատկայի ուսուցման պարագայում դա դժվար մատչելի նյութը մի քանի անգամ բացատրելն է, դժվար լուծվող խնդրի ու վարժության լուծման ուղին ցույց տալը, մաթեմատիկական օրինաչափությունների գեղեցկությունը ցույց տալը, համբերությունը, որ անհրաժեշտ է ցուցաբերել՝ մինչև աշակերտը կվայելի սեփական հայտնագործման բերկրանքը և այլն, և այլն: Եթե ուսուցչի կողմից բարեգործության' վերը նշված լրացուցիչ ջանքերը արվում են առանց աշակերտի արժանապատվությունը վիրավորելու, ապա աշակերտի մոտ կարող է առաջանալ միայն երախտագիտության զգացում: Սակայն, ավելի հաճախ՝ հատկապես մաթեմատիկայի դասավանդման գործընթացում, աշակերտների մի զգալի մասի նկատմամբ ուսուցիչը ցուցաբերում է անտարբերություն, ինչը պարտավորությունից բխող պարտքի թերացում է և, հետևապես, աշակերտի նկատմամբ հարգանքի բացակայություն և վիրավորում է նրա արժանապատվությունը: Ուսուցիչը կարող է նաև մաթեմատիկայի դասավանդման գործընթացում հասնել ուժեղ աշակերտների կողմից ավելի թույլ աշակերտների նկատմամբ անշահախնդիր օգնության կազմակերպման, ինչը բարեգործություն է և ծնում է երախտագիտության զգացում:

Դասավանդման գործընթացը մեծապես կարիք ունի և լավագույնս կարող է ծառայել կարեկցանքի զգացմունքի դրսևորմանը, ինչը առանձնապես ակնառու է մաթեմատիկայի դասավանդման գործընթացում: Հիրավի, դպրոցական հասակի երեխայի համար ուրախության և վշտի ավելի մեծ աղբյուր, քան հաղթահարված, կամ չհաղթահարված նյութը' դասը, խնդիրը, վարժությունը, չեն կարող լինել: Թեորեմում արծարծված հատկության, նրա ապացուցման ընկալումը, դժվար խնդրի կամ վարժության լուծումը կարող են բերկրանք պատճառել աշակերտին: Իսկ չլուծված յուրաքանչյուր խնդիր' իր հետ վշտի ինչ-որ բաժին է բերում: Եվ այստեղ իրավիճակը սրվում է, որովհետև աշակերտի հաջողությունը կամ անհաջողությունը ի ցույց է տրվում ողջ դասարանին, ինչը մեծացնում է ուրախության կամ վշտի չափաբաժինը: Ուսուցիչը պարտավոր է կիսել թե՛ ուրախությունը, թե՛ վիշտը: Նա կարող է նաև այնպես կազմակերպել իր օգնությունը, որ մեծանա, բազմապատկվի նման ուրախությունը կամ փարատվի առաջացած վիշտը: Որոշ դեպքերում կարող է ի ցույց չդնել աշակերտի ձախողումը և այլն, և այլն: Աշխատանքը լավ կազմակերպելու դեպքում ուսուցիչը կարող է նպաստել նաև կարեկցանքի որակի ձևավորման աշակերտ-աշակերտ փոխհարաբերությունների միջոցով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Հ. Ս. Միքայելյան, Արժեքներ և արժեքային հարաբերություններ, Երևան 2018

2. Հ. Ս. Միքայելյան, Բարոյական արժեքները և մաթեմատիկայի ուսուցման գործընթացը, բարին, չարը, արդարությունը, Մաթեմատիկան դպրոցում, N3, 2010:

3. Հ. Ս. Միքայելյան, Բարոյական արժեքները և մաթեմատիկայի ուսուցման գործընթացը, առաքինություն և արատ, Մաթեմատիկան դպրոցում, N4, 2010:

4.«Մաթեմատիկա » առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, 2021թ.

5.Չ. Ուայթ, Քաղաքացիական կրթության բարոյական տեսանկյունը, սովորությու՞ն, թե՞ գիտակցական ընտրություն: Մարդ և հասարակություն, N1, 2010: